# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /2-րդ/

**«ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փ. N 1 պարիսպ հասցեում նախատեսվող 1-ին ծածկարանի և 2-րդ ծածկարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

Մեծավան բնակավայրի

19.11.2024թ.

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը,
- Լոռու մարզի Տաշիր համայնքի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ Սամվել Շահբազյանը,

-«ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ջոն Պողոսյանը և համայնքի բնակիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով 2024թ. նոյեմբերի 19-ին ժամը 12:00-ին Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փ. N 1 պարիսպ հասցեում նախատեսվող 1-ին ծածկարանի և 2-րդ ծածկարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ Մեծավան բնակավայրում նախատեսվում է կառուցել երկու հատ ծածկարան: Համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, Օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է, 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը:

Համաձայն կառավարության Որոշման՝ շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում պետք է ներկայացվեն փորձաքննական կենտրոնին ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

Այնուհետև, փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

Հանրային լսման ընթացքում ելույթ ունեցավ «ԲՈԶՈՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ջոն Պողոսյանը:

Հանրային լսման մասնակիցների կողմից եղան հարցադրումներ, որոնց վերաբերյալ տրվեցին սպառիչ պատասխաններ:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ, ովքեր միաձայն ողջունեցին նախատեսվող գործունեությունը:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ լսման մասնակիցները որոշեցին հավանություն տալ «ԲՈԶՈՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փ. N 1 պարիսպ հասցեում նախատեսվող 1-ին ծածկարանի և 2-րդ ծածկարանի կառուցմանը:

Հանրային լսումը ամբողջությամբ տեսաձայնագրվել է:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան

«ԲՈԶՈՅԱՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ջոն Պողոսյան

"ԲՈԶՈՅԱՆ" "БОЗОЯН" "BOZOYAN" 07203971